**«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N1

25.07.2025թ. գ. Ոսկեվան

«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրության 23-րդ կետի 7-րդ ենթակետով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովը միաձայն որոշեց՝

1. Սահմանել «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության նախագահի Բ. Սաֆարյանին՝ ապահովել «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու կանոնակարգ»-ի տեղադրումը կայքում ու այլ միջոցներով հանրայնացումը:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ ________________ ________________

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ ________________ ________________

25.07.2025թ.

Հավելված

«Ոսկեվան» հայրենակցական միություն
հասարակական կազմակերպության ընդհանուր
ժողովի 25.07.2025թ. N1 որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու հետ կապված հարաբերությունները:

2. «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով Կազմակերպության անդամ կարող են դառնալ՝

1) Ոսկեվանից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների այլ բնակավայրեր մշտական բնակության տեղափոխված անձինք.

2) Ոսկեվանից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների այլ բնակավայրեր մշտական բնակության տեղափոխված անձանց ամուսինները, զավակները, նրանց սերունդները.

3) Ոսկեվանի մշտական բնակիչները.

4) այլ անձինք՝ որպես պատվավոր անդամ:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն հայտնած անձին Կազմակերպության Գործադիր մարմինը ծանոթացնում է Կազմակերպության նպատակներին, Կազմակերպության անդամների իրավասություններին, անդամավճարի չափին և վճարման կարգին, ինչպես նաև կանոնադրության այլ դրույթներին ու ներքին կանոնակարգերին:

4. Սույն Կանոնակարգի 3-րդ կետում նշված ակտերին իրազեկվելուց հետո Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը Կազմակերպության Նախագահին ներկայացնում է դիմում՝ համաձայն կցվող Ձևի:

5. Կազմակերպության Նախագահը ուսումնասիրելով Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձի դիմումը և կից փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

6. Սույն Կանոնակարգի 5-րդ կետում ամրագրված դիմումի ուսումնասիրության համար սահմանվում է 5 աշխատանքային օր:

7. Կազմակերպության կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերում Կազմակերպության պատվավոր անդամի նախաձեռնությունը կարող են ներկայացնել՝

1) Կազմակերպության նախագահը.

2) Կազմակերպության Խորհրդի առնվազն 3 անդամ.

3) Կազմակերպության անդամների առնվազն ¼-ը:

8. Կազմակերպությանն անդամակցելու մասին դիմումի ուսումնասիրության դրական արդյունքների դեպքում Նախագահը Կազմակերպության կանոնադրության՝

1) 11-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխանելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում լուծում է Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը.

2) 11-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխանելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Կազմակերպության խորհրդի քննարկմանը: Սույն ենթակետում նշված դեպքերում Խորհրուդը Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է 5 աշխատանքային օրվա ընթացքում նիստ հրավիրելու կամ հեռավար քննարկան միջոցով.

3) 11-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխանելու դեպքում ներկայացնում է Կազմակերպության Ընդհանուր Ժողովի առաջիկա նիստի քննարկմանը:

9. Կազմակերպության Ընդհանուր Ժողովի առաջիկա նիստում ներկայացնում է Կազմակերպության նոր անդամներին:

10. Կազմակերպության անդամի կողմից Կազմակերպությունից դուրս գալու դիմում ներկայացնելու դեպքում Նախագահը դիմումը քննարկում է և Կազմակերպությունից դուրս գալու հարցը լուծվում է սույն Կանոնակարգի 6-ից 8-րդ կետերում ամրագրված կարգով ու ժամկետներում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼԸ

11. Կազմակերպության անդամը Կազմակերպության անդամությունից կարող է հեռացվել՝

1) Կազմակերպության կամ Կազմակերպության անդամների անունից քաղաքական գործունեությամբ զբաղվելու դեպքում.

2) Կազմակերպությունը կամ Կազմակերպության անդամներին նախընտրական, ընտրական կամ քաղաքական այլ գործընթացներում ներգրավելու կամ ներգրավելու փորձերի դեպքում.

3) Ֆինանսական, գույքային և այլ չարաշահումների դեպքում.

4) Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքում .

5) «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Կազմակերպության կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքում:

12. Կազմակերպության անդամին Կազմակերպության անդամությունից հեռացնելու միջնորդությունը կարող են ներկայացնել՝

1) Կազմակերպության նախագահը.

2) Կազմակերպության Խորհրդի առնվազն 2 անդամ.

3) Կազմակերպության անդամների առնվազն 1/6-րդը:

13. Կազմակերպության անդամին Կազմակերպության անդամությունից հեռացնելու միջնորդությունը Նախագահը դիմումը քննարկում է և Կազմակերպությունից անդամությունից հեռացնելու հարցը լուծվում է Կազմակերպության կանոնադրության 12-րդ կետում ու սույն Կանոնակարգի 6-ից 8-րդ կետերում ամրագրված կարգով ու ժամկետներում, բացառությամբ՝ սույն Կանոնակարգի 14-րդ կետով սահմանված դեպքի:

14. Կազմակերպության պատվավոր անդամին Կազմակերպությունից հեռացնելու միջնորդության առկայության ու Խորհրդի համաձայնության դեպքում Նախագահը, հեռացման հարցը լուծելու դեպքում, կարող է հրավիրել հեռավար արտահերթ Ընդհանուր Ժողով:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ _____

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ _____